Պարույր Սևակ

Քարի գալուստ

Իմ սենյակի մեջ
Գարնան հալոցքի պատրանք էր ցրում
Լվացարանի ծորակը ծանոթ.
(Միրտըս կարոտ էր մտերի՛մ ձայնի)...
Ջրհորդաններում
Նորից տանջվում էր ջուրը թալկացած,
Որ մեկ-մեկ նաև ուշքի էր գալիս
Եվ ուրախ լալիս՝
Նո՛ւյն վաղածանոթ-ընտանի ձայնով.
(Միրտըս կարոտ էր հարազա՛տ ձայնի,
Որ դեռ չէ՞ր հնչում)...
Ապակիների լռության վրա
Անբուրմունք-անգույն ծաղկունքը ցրտի
Լուռ թախծում էին,
Ինչպես որ նույնիսկ բենզինն էր թախծում
Սառած-կանգ առած մեքենաների երակների մեջ.
(Միրտըս կարոտ էր սպասվա՛ծ ձայնի,
Որ պիտի՛ հնչեր)...
Ու ես կարծես թե շատ էի նման այն տիպ-նկարին,
Որ իր թափանցիկ թաղանթի ներքո
Տանջվում է սաստիկ, խեղդվում է ասես,

Ու երազում է մի ձեռք մանկական,
Որ թրջի իրեն
Ու շրջի թղթին:
Եկա՛ր,
Թրջեցիր քո քնքշանքի մեջ
Մանկականից էլ անմեղ ձեռքերով
Ու փակցրրեցիր մաքրությանը քո,
Որ ես ազատվեմ ճնշող թաղանթից
Եվ պայծառացած գույներով զնգա՜մ...
Դո՛ւ չշտապեցիր,
Կյա՜նքը չուշացավ,
Որ... մեր անձնական օրացույցի մեջ
Մե՛կ օր էլ ներկի ալ-կարմիր գույնով
Եվ գորշությանն իր տա երանգ տոնի:
Եկա՛ր,
Որ (բա՜վ է) էլ չապավինեմ
Կարոտ հոլովող բառերին ծխոտ,
Եվ որ (հերի՜ք է) ձեռքերս այլևրս չսովեն կրկին:
Եկա՛ր,
Եվ եկար՝ առողջությա՛ն պես,
Որ... իմ երբեմնի
Հիվանդությունն էլ վերհիշեմ հիմա
Քնքշությամբ թաքուն
Եվ հասկանալի մի գորովանքով:
-Բարո՜վ ես եկել:
Եկա՜ր:
Եվ եկար՝ վարպետությա՛ն պես.
Փոքր-ինչ ուշացած, սակայն մեկընդմիշտ:
-Գալուստը՝ բարի՜:
Եկա՛ր,

Որ նույնիսկ ամենաանզո՛ր բառը («Տե՛ր աստված»)
Հանկարծ վերածվի ամենազորե՛ղ բառի («Տե՛ր աստված»):
Տե՛ր ու սե՛ր աստված,
Իրավ չի՞ ասված,
Որ մահիճները երբ հարդարված են՝
Արդեն չե՛ն ապրում, արդեն մեռա՛ծ են:
Եկա՛ր,
Որ նրանք հարությո՛ւն առնեն՝ սրբերի՛ նման...

25-29.II.1964թ.
Երևան